ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 04/23

04.09.2023թ. ք. Երևան

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի ՀՀ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ դիմումի առնչությամբ

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ սնանկության դատարանի (այսուհետ Դատարան) 14.12.2022 թվականի «Առանձին պահանջի մասով գործի վարույթն առանձնացնելու մասին» թիվ ԵԴ/24458/02/19 որոշմամբ՝ թիվ ԵԴ/24458/02/19 քաղաքացիական գործից՝ ըստ «ՍՊԻՏԱԿ 1» ԲԲԸ-ի հայցի ընդդեմ «ՍԱԴԵ» ԲԸ-ի հայաստանյան մասնաճյուղի, երրորդ անձ թիվ ՍՆԴ/0405/04/21 սնանկության գործով կառավարիչ Վահե Նազարեթյան՝ 17.04.2014 թվականի թիվ SUBC001//320/2014 ենթակապալի պայմանագրից բխող՝ «ԱՊԻՏԱԿ 1» ԲԲԸ-ի և «ՍԱԴԵ» ԲԸ-ի հայաստանյան մասնաճյուղի միջև իրավահարաբերությունները դադարած ճանաչելու պահանջի մասին, ըստ հակընդդեմ հայցի «ՍԱԴԵ» ԲԸ-ի հայաստանյան մասնաճյուղի ընդդեմ «ՍՊԻՏԱԿ 1» ԲԲԸ-ի, երրորդ անձ՝ թիվ ՍՆԴ/0405/04/21 սնանկության գործով կառավարիչ Վահե Նազարեթյան՝ գումարի բռնագանձման պահանջի մասին և ըստ «ՍՊԻՏԱԿ 1» ԲԲԸ-ի հայցի ընդդեմ «ՍԱԴԵ» ԲԸ-ի հայաստանյան մասնաճյուղի, երրորդ անձ՝ թիվ ՍՆԴ/0405/04/21 սնանկության գործով կառավարիչ Վահե Նազարեթյան իրավահարաբերությունները դադարած ճանաչելու պահանջների մասին, ըստ հակընդդեմ հայցի «ՍԱԴԵ» ԲԸ-ի հայաստանյան մասնաճյուղի ընդդեմ «ՍՊԻՏԱԿ 1» ԲԲԸ-ի, երրորդ անձ՝ թիվ ՍՆԴ/0405/04/21 սնանկության գործով կառավարիչ Վահե Նազարեթյան՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, առանձնացվել է «ՍԱԴԵ» ԲԸ-ի հայաստանյան մասնաճյուղի հակընդդեմ հայցերն ընդդեմ «ՍՊԻՏԱԿ 1» ԲԲԸ-ի, երրորդ անձ՝ թիվ ՍՆԴ/0405/04/21 սնանկության գործով

կառավարիչ Վահե Նազարեթյան՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

Առանձնացված պահանջի մասով գործին տրվել է թիվ ՍՆԴ/0155/02/22 համարը:

Դատարանի (նախագահությամբ դատավոր Բ. Մկրտչյանի) 15.12.2022 թվականի որոշմամբ թիվ ՍՆԴ/0155/02/22 գործի վարույթն ըստ «ՍԱԴԵ» ԲԸ-ի հայաստանյան մասնաճյուղի հակընդդեմ հայցի (հայցի) ընդդեմ «ԱՊԻՏԱԿ 1» ԲԲԸ-ի 937.526,65 Եվրոյին համարժեք 484.748.154,38 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին և ըստ «ՍԱԴԵ» ԲԸ-ի հայաստանյան մասնաճյուղի հակընդդեմ հայցի (հայցի) ընդդեմ «ՍՊԻՏԱԿ 1» ԲԲԸ-ի՝ 579.337.888,80 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին, կարճվել է:

Նշված որոշման դեմ «ՍԱԴԵ» ԲԸ-ի հայաստանյան մասնաճյուղի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը վերաքննիչ դատարանի 01.03.2023 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում է քննվել միացյալ թիվ ԵԴ/24458/02/19 քաղաքացիական գործն ըստ հայցի «ՍՊԻՏԱԿ 1» ԲԲԸ-ի ընդդեմ «ԱԱԴԵ» ԲԸ հայաստանյան մասնաճյուղի 11.03.2013 թվականի թիվ N 001/320/2013 կոնսորցիումի համաձայնագրից, 17.04.2014 թվականի թիվ SUBC001/320/2014 ենթակապալի պայմանագրից բխող՝ «ՍՊԻՏԱԿ 1» ԲԲԸ և «ՍԱԴԵ» բաժնետիրական ընկերության հայաստանյան մասնաճյուղի միջև իրավահարաբերությունները դադարած ճանաչելու պահանջի մասին և ըստ հակընդդեմ հայցերի «Սադե» Կոմպանի ժենեղալ դը Թղավո դիդղոլիք բաժնետիրական ընկերության ընդդեմ «Սպիտակ 1» ԲԲԸ-ի գումարի բռնագանձման պահանջի մասին:

- 22.12.2021 թվականին կայացված վճռով Դատարանը դիմումը բավարարել է և «Սպիտակ 1» ԲԲԸ-ն ճանաչվել է սնանկ:

- Դատարանը 15.12.2022 թվականին կայացրել է «Առանձնացված մասով գործի վարույթը կարճելու մասին» որոշում, որի համաձայն Դատարանը կարճել է գործի վարույթը և որոշել «Սադե» հայաստանյան մասնաճյուղից հօգուտ պետական բյուջեի բռնագանձել 21.281.720 ՀՀ դրամ որպես Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի մարտի 4-ի և 2020 թվականի մայիսի 22-ի որոշումներով հետաձգված պետական տուրքի գումար:

2. ԴԻՄՈՒՄՈՎ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴՐՈՒՅԹԸ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝

ա) եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ.

ա1) Սահմանադրական դատարանի կողմից դիմումը վերադարձնելու, գործի քննությունը մերժելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում.

ա2) պետական տուրքը վճարած կողմին՝ մինչև երկու ժամ տևողությամբ իրականացված հաշտարարության համար հաշտարարին վճարված վարձատրության դիմաց, բայց ոչ ավելի, քան Կառավարության որոշմամբ սահմանված չափով, եթե օրենքով նախատեսված է մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջ, կազմվել է հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրություն և հաշտարարության ավարտից հետո նույն անձանց միջև նույն առարկայի մասին և նույն փաստական հիմքերով գործով դատարան ներկայացվել է հայցադիմում, և հայցը մերժվել կամ մասնակի է բավարարվել.

բ) դատարանների կողմից դիմումները (բողոքները) վերադարձվելու կամ դրանց ընդունումը մերժվելու, ինչպես նաև նոտարի կողմից նոտարական գործողությունների կատարումը մերժվելու, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից քաղաքացիական կացության ակտերի գրանցումը և ուրիշ գործողությունների ու ծառայությունների կատարումը մերժվելու դեպքում, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.

բ1) երբ վերաքննիչ դատարանը, բեկանելով և փոփոխելով դատական ակտը, մերժել է այն հայցը, որով հայցվորը ազատված է եղել պետական տուրքի վճարումից.

գ) տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը, կամ վճռաբեկ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու դեպքում.

գ1) գործն ընդհանուր հայցային վարույթի կարգով վարույթ ընդունելուց հետո այն պարզեցված վարույթի կարգով քննելու դեպքում.

դ) եթե հայցի ենթադրական գինը, որից դատարանը գանձել են պետական տուրքը, գործի քննության ընթացքում ճշտվել է, որի հետևանքով պակասել է հայցի ընդհանուր գինը.

դ1) եթե առաջին ատյանի դատարանը որոշում է կայացրել վճարման կարգադրությունը վերացնելու մասին՝ պարտապանի կողմից առարկություն ներկայացվելու կամ վճարման կարգադրությունը պարտապանին առաքելու անհնարինության դեպքում.

ե) գույքն արգելանքից ազատելու մասին հայցը բավարարելու դեպքում.

զ) պետական տուրք գանձող պետական մարմնի կողմից այս կամ այն

գործողության կատարումը մերժելու դեպքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ.

է) մինչև համապատասխան գործողությունների կատարման կամ ծառայությունների մատուցման ավարտման պահը, պետական տուրքը վճարողի կողմից համապատասխան ծառայություններ ստանալուց կամ գործողություններ կատարելուց հրաժարվելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պետական տուրք գանձող մարմնի կողմից, սահմանված կարգով, արդեն սկսվել է տևական բնույթ կրող համապատասխան գործողության կատարումը կամ ծառայության մատուցումը.

ը) անչափահաս երեխաներ չունեցող ամուսինների փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության ակտի գրանցման փոխարենուղղ. մուծված պետական տուրքը, եթե գրանցումը չի կատարվել ամուսինների հաշտվելու կամ նրանցից որևէ մեկի չներկայանալու պատճառով.

թ) քաղաքացիական կացության ակտերը կամ նոտարական կարգով վավերացված պայմանագրերը, ժառանգության իրավունքի մասին վկայականները և այլ փաստաթղթերը դատական կարգով անվավեր ճանաչվելու դեպքում.

ժ) արդյունաբերական սեփականության օբյեկտների գրանցման հայտերով փորձաքննության կայացրած որոշումը բողոքարկման խորհրդի կամ դատարանի կողմից անվավեր ճանաչելու դեպքում բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է փորձաքննության որոշումն ընդունումից հետո ի հայտ եկած նոր հանգամանքների հիմքերով.

ժա) Հայաստանի Հանրապետությունից մեկնելու փաստաթղթեր ստանալու համար քաղաքացիների վճարած պետական տուրքերը՝ մինչև մեկնելու թույլտվություն ստանալը արտասահման մեկնելուց հրաժարվելու դեպքում:

Սույն օրենքի 18 հոդվածով նախատեսված և վերադարձման ենթակա պետական տուրքի գումարները վճարողի կողմից, պետական տուրք գանձող մարմնի սահմանած կարգով, կարող են օգտագործվել նույն մարմնի կողմից այլ գործողություն կատարելու կամ ծառայություն մատուցելու համար, եթե վերադարձման ենթակա պետական տուրքի գումարները վճարված են այն հաշվին, որին վճարվում են տվյալ գործողության կատարման կամ ծառայության մատուցման համար սահմանված պետական տուրքի գումարները:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կողմից վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվելու կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 162 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի կողմից գործն ըստ էության

լուծող դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվելու դեպքում պետական տուրքը, բայց ոչ ավելի, քան քսան հազար Հայաստանի Հանրապետության դրամ, չի վերադարձվում"

Սույն օրենքի 19.6-րդ հոդվածի 2-6-րդ մասերով նախատեսված պետական տուրքը վերադարձման ենթակա չէ:

3. ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ուսումնասիրելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը և առավելապես համաձայն լինելով կատարված վերլուծությունների հետ՝ ՀՀ փաստաբանների պալատի գիտավերլուծական կենտրոնը կարծում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից բարձրացված իրավական հարցադրումներն անհրաժեշտ է դիտարկել նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի լույսի ներքո: Այսպես, Կոնվենցիային կից 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:*

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դատական տուրքերը վճարելու պարտավորությունը և համապատասխան կարգավորումները ներառվում են թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերության մեջ: Դատավարության կողմերից դատական վճարների գանձումը հետապնդում է տարբեր նպատակներ, ներառյալ դատական համակարգի ֆինանսավորումը և պետական եկամուտների ավելացումը (Perdigão v. Portugal [GC], § 61):

Պետական տուրքի մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

Նույն օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝

ա) դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար.

...:

Այսինքն դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական բյուջե վճարվող պետական տուրքը իրենից ենթադրում է կոնկրետ գործողությունների կատարում (տվյալ դեպքում՝ հայցադիմումի քննում), որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից որոշմամբ ներկայացված փաստական տվյալներից երևում է, որ տեղի չի ունեցել: Մասնավորապես, ՀՀ սնանկության դատարանի «Առանձին պահանջի մասով գործի վարույթն առանձնացնելու մասին» որոշումն ընդունվել է 14.12.2022 թվականին: Հաջորդ օրը՝ 15.12.2022. թվականին առանձնացված գործի վարույթն ըստ «ՍԱԴԵ» ԲԸ-ի հայաստանյան մասնաճյուղի հակընդդեմ հայցի (հայցի) ընդդեմ «ԱՊԻՏԱԿ 1» ԲԲԸ-ի 937.526,65 Եվրոյին համարժեք 484.748.154,38 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին և ըստ «ՍԱԴԵ» ԲԸ-ի հայաստանյան մասնաճյուղի հակընդդեմ հայցի (հայցի) ընդդեմ «ՍՊԻՏԱԿ 1» ԲԲԸ-ի՝ 579.337.888,80 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին, կարճվել է: Այսինքն, Սնանկության դատարանը առանձնացված գործի մասով որևէ դատավարական գործողություն չի կատարել, կամ ինչպես «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածում է նշված, պետական մարմինը իր լիազորությունները չի իրականացրել, որպեսզի դրանով պայմանավորված էլ օրենքով սահմանված ... գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձը Հայաստանի Հանրապետության պետական ... բյուջե օրենքով սահմանված պարտադիր վճար մուծեր:

Նման պարագայում «Սադե» հայաստանյան մասնաճյուղից հօգուտ պետական բյուջեի 21.281.720 ՀՀ դրամ որպես Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի մարտի 4-ի և 2020 թվականի մայիսի 22-ի որոշումներով հետաձգված պետական տուրքի գումար բռնագանձելու որոշումը անհամաչափ միջամտություն է ՀՀ սահմանադրությամբ և միջազգային մի շարք փաստաթղթերով երաշխավորված սեփականության իրավունքին:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ **Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի կանոնակարգումները խնդրահարույց են:**

Համակարգող՝ ***Ա.Ասատրյան***